Գի դը Մոպասան

Մենություն

Մի ճաշկերույթից հետո էր… Չափազանց զվարթ էինք: Ներկաներից մեկը՝ մի հին ընկեր, ինձ ասաց.

– Չէ՞իր ցանկանա քայլել Ելիսեյան դաշտերն ի վեր:

Ու մենք, ահա, մեկնեցինք տերևներով հազիվ զգեստավորված ծառերի տակով՝ հանդարտ քայլերով շարունակելով երկար զբոսանքը: Փարիզյան անորոշ ու տևական աղմուկից բացի ոչ մի ուրիշ ձայն չկար: Մի զովաբեր քամի փչում էր մեր դեմքին, աստղաշղթան ոսկեփոշի էր սփռում խավար երկնքում:
Իմ ընկերն ասաց ինձ.

-Չգիտեմ՝ ինչու այստեղ ավելի լավ եմ շնչում, քան ուրիշ որևէ տեղ, գիշերը: Թվում է՝ միտքս այստեղ թևեր է առնում: Երբեմն, մի վայրկյան իմ հոգում ապրող լույսերի այս տարատեսակները ստիպում են հավատալ, որ ուր որ է կբացահայտենք իրերի աստվածային գաղտնիքը: Հետո պատուհանը կրկին փակվում է: Վե՛րջ: Ժամանակ առ ժամանակ մենք տեսնում էինք լայնարձակ ծառուղիներով սահող երկու ստվեր, անցնում էինք նստարանի մոտով, ուր երկու արարած, իրար կողք կողքի նստած լոկ մի սև հետք էին կազմում:

Հարևանս շշնջաց .

-Խե՛ղճ մարդիկ, նրանք ինձ ոչ թե հակակրանք, այլ խորին կարեկցանք են ներշնչում: Մարդկային կյանքի խորհրդավորությունների մեջ կա մեկը, ուր ինքս թափանցել եմ. գոյապայքարում մեր մեծագույն տառապանքը գալիս է նրանից, որ մենք հավիտյան միայնակ ենք, և մեր բոլոր ջանքերը, բոլոր գործողությունները մենությունն այդ ցրելու ապարդյուն փորձեր են սոսկ: Նստարանին բացօթյա նստած սիրահարները, փնտրում են, ինչպես մենք, ինչպես բոլոր արարածները, իրենց մենությանը վերջ դնելու հնար,

ոչինչ ավելին, լոկ մի պահ, բայց նրանք եղել են, նրանք կմնան մշտապես միայնակ, մենք ևս:

Ոմանք առավել ուժգին են զգում դա, ուրիշներն՝ ավելի թույլ, ահա և ամենը: Մի որոշ ժամանակ է, ինչ կրում եմ այս անտանելի տառապանքի գիտակցումը, հայտնաբերումը սարսափելի մենության, որում ապրում եմ ես, և գիտեմ, որ ոչինչ չի կարող վերջ դնել դրան, լսու՞մ ես, ոչի՛նչ: Ինչ էլ փորձենք, ինչ էլ, որ անենք, ինչպիսին էլ որ լինի մեր սրտերի թրթիռը, մեր շուրթերի կանչը, մեր ձեռքերի նվաղումը, մենք միշտ միայնակ ենք:

Քեզ այս երեկո զբոսանքի հրավիրեցի, որպեսզի տուն չվերադառնամ, որովհետև հիմա անտանելի տառապում եմ իմ կացարանի մենությունից: Ի՞նչ օգուտ դրանից սակայն: Ես խոսում եմ քեզ հետ, դու լսում ես, և մենք երկուսս էլ միայնակ ենք, կողք կողքի, բայց միայնակ: Ինձ հասկանու՞մ ես:

“Երանի՛ հոգով աղքատներին”, – ասում է Սուրբ գիրքը: Նրանք կրում են երջանկության պատրանքը: Նրանք… նրանք չեն զգում մեր թշվառ մենությունը, չեն թափառում կյանքում ինձ նման՝ չճանաչելով ոչ մի ուրիշ շփում, բացի ակնթարթային հանդիպումներից, չիմանալով ուրիշ երջանկություն, բացի հասկանալու, տեսնելու, գուշակելու, մեր հավերժական միայնությունից տառապելու գիտակցման եսասեր բավականությունից:
Ինձ մի քիչ խենթ ես կարծում, այնպես չէ՞:

Լսի՛ր ինձ, այն օրից, ինչ զգացել եմ իմ անձի մենությունը, թվում է, ամեն օր ավելի ու ավելի, խորանում եմ ստորգետնյա մութ մի տարածության մեջ, որի ծայրերը չեմ գտնում, չեմ ճանաչում վերջը նրա, և որը գուցե ոչ մի ծայր էլ չունի: Գնում եմ այնտեղ միայնակ, ինքս ինձ հետ, չկա կողքիս ոչ ոք, չկա շուրջս ոչ ոք, նույն մթամած ուղին ինձ հետ անցնող որևէ կենդանի էակ: Ստորերկրյա անդունդն այդ կյանքն է: Երբեմն աղմուկներ, ձայներ, ճիչեր եմ լսում…կուրորեն առաջանում եմ դեպի մշուշոտ աղաղակներն այդ: Բայց ստույգ չգիտեմ՝ որտեղից են գալիս դրանք, երբեք ոչ մեկին չեմ հանդիպում մթության մեջ, որ պարուրել է ինձ, չեմ գտնում երբեք ուրիշ ոչ մի ձեռք: Հասկանու՞մ ես:

Երբեմն եղել են մարդիկ, ովքեր գուշակել են տառապանքն այդ անգութ: Մյուսեն բացականչել է.

Ո՞վ է գալիս: Ո՞վ է կանչում…Ոչ ոք…

Միայնակ եմ…Ժամն է հնչում

Օ,՛ մենությու՛ն… թշվառությու՛ն…

ինչպես իմ մեջ: Նա պոետ էր, կյանքն էր լցնում ուրուներով, երազներով: Երբեք իրականում նա մենակ չի եղել: Ես… ես միայնակ եմ: Գյուստավ Ֆլոբերը՝ այս աշխարհի մեծագույն դժբախտներից մեկը, քանզի եղել է մեկն ամենամեծ պայծառատեսներից, նա չէ՞ր արդյոք, որ գրում էր մի ընկերուհու այս հուսահատ տողը.“ Մենք մի անապատում ենք: Ոչ ոք չի հասկանում ոչ մեկին:” Ո՛չ, ոչ ոք ոչ մեկին չի հասկանում, ինչ էլ մտածեն, ինչ էլ ասեն, ինչքան էլ փորձեն: Երկիրն արդյոք գիտե՞, թե ինչ է կատարվում աստղերի հետ, նրանց, որոնք, ահա՛, իբրև հրահատիկներ նետված են տարածությունից դուրս, այնքան հեռու, որ մենք նկատում ենք լոկ պայծառությունը մի քանիսի, մինչ մյուսների անհաշվելի բանակը կորցված է անսահմանության մեջ, այնքան մոտիկ, որ գուցե կազմում են մի ամբողջություն, ինչպես մոլեկուլները մարմնի:

Է՛հ, մարդը չգիտի, թե ինչ է կատարվում մեկ ուրիշի մեջ անդադար: Մենք առավել հեռու ենք միմյանցից, քան այս աստղերը, ավելի մեկուսի հատկապես, որովհետև անմեկնելի է միտքը:

Գիտե՞ս ավելի սարսափելի մի բան, քան մարդկային այս արարածների հաստատուն հպումն է, որ բացահայտել անկարող ենք: Սիրում ենք միմյանց այնպես, ասես շղթայված լինենք, իրար շատ մոտ՝ միմյանց պարզված ձեռքերով, առանց իրար միատարրվելու կարողության: Միաձույլ դառնալու մի տանջահարույց կարիք տիրում է մեզ, բայց մեր բոլոր ջանքերն անպտուղ են մնում, անօգուտ՝ մեր թափառումները, խոստովանանքը մեր ՝ ապարդյուն, անկարող՝ մեր նվաղումը, իզուր՝ փաղաքշանքները: Երբ ցանկանում ենք միատարրվել, միմյանց նկատմամբ ձգտումները գեթ ավելի են հեռացնում մեզ միմյանցից:

Ես ինձ երբեք ավելի միայնակ չեմ զգում, քան այնժամ, երբ նվիրաբերում եմ սիրտս մի ընկերոջ, քանզի այդժամ ավելի լավ եմ հասկանում անհաղթահարելի խոչընդոտը: Նա այստեղ է՝ այդ մարդը, ես տեսնում եմ նրա պայծառ աչքերը՝ ուղղված ինձ, բայց ընդհանրապես չգիտեմ դրանց հետևում թաքնված նրա հոգին: Նա լսում է ինձ: Ի՞նչ է մտածում: Այո՛, ի՞նչ: Չե՞ս հասկանում այդ տառապանքը: Գուցե ատում է ինձ, կամ արհամարհում, կամ ծաղրում գուցե: Նա մտածում է իմ ասածների մասին , դատում է ինձ , հեգնում, դատապարտում, ինձ փոքրոգի կամ հիմար կարծում: Ինչպե՞ս իմանալ՝ ինչ է մտածում: Ինչպե՞ս իմանալ՝ սիրում է նա ինձ այնպես, ինչպես ես եմ սիրում, և ի՞նչ է պտտվում այդ փոքրիկ կլորիկ գլխում: Ինչպիսի՛ առեղծված, մարդկային մի արարածի անծանոթ միտքը, դարանակալ ու ազատատենչ միտքը, որ չենք կարող ո՛չ ճանաչել, ո՛չ կառավարել, ո՛չ իշխել, ո՛չ հաղթել:
Իսկ ես, փափագում եմ տրվել անմնացորդ, բացել հոգուս դռները բոլոր, բայց նվիրվել այլևս չեմ կարողանում: Ես պահպանում եմ իմ ներսում՝ հոգուս խորքում, իմ “Ես”-ի գաղտնարանը, ուր ոչ ոք չի թափանցում: Ոչ ոք չի կամենում այն բացահայտել , մտնել այնտեղ, որովհետև ոչ ոք նման չէ ինձ, որովհետև ոչ ոք չի հասկանում ոչ մեկին: Գոնե հիմա՝ այս պահին ինձ հասկանու՞մ ես, դու: Ո՛չ, դու ինձ խենթ ես կարծում, դու զննում ես ինձ, հեռու պահում քեզ ինձանից: Ինքդ քեզ հարցնում ես. “ Ի՞նչ է կատարվում նրա հետ այսօր”: Բայց թե մի օր կարողանաս վերջապես հասկանալ, գուշակել իմ սարսափազդու ու անպտուղ տառապանքը, արի՛ ինձ այդ մասին ասելու “ես քեզ հասկացա” և դու գուցե մի պահ ինձ երջանկացնես:

Կանայք են, որ ամենից ավելի ստիպում են ինձ կրկին նկատել իմ մենությունը: Թշվառությու՛ն… Ինչքա՛ն եմ տառապել նրանց պատճառով, որովհետև հաճախ են տվել ինձ միայնակ չլինելու պատրանքը, ավելի հաճախ քան տղամարդիկ: Երբ թափանցում ենք Սիրո աշխարհը, թվում է՝ ազատագրվում ենք: Գերմարդկային մի երջանկություն պարուրում է մեզ: Գիտե՞ս ՝ ինչու: Գիտե՞ս ՝ որտեղից է գալիս անսահման երջանկության այդ զգացումը: Դա միայն այն պատճառով է, որ երևակայում ենք մեզ , թե միայնակ չենք այլևս: Էությանդ մեկուսացումն ու լքումն ավարտված են թվում: Ինչպիսի՛ սխալմունք: Այդ հավերժական սիրո կարիքով, որ կրծում է մեր մենակյաց հոգին, կինը Երազի ամենամեծ խաբկանքն է՝ ավելի ևս տառապյալ, քան գուցե մենք,:

Դու գիտես երկարամազ, հմայագեղ, մեզ խենթության հասցնող այդ արարածի հետ դեմ-դիմաց անցկացրած հիացիկ ժամերը: Ի՞նչ մոլություն է պարուրում մեր հոգուն:

Ի՞նչ պատրանք է տիրում մեզ:

Ես և նա, թվում է՝ ուր որ է մի ամբողջությու՞ն պիտի կազմենք: Բայց այդ “ուր որ է”-ն երբեք վրա չի հասնում, և շաբաթների սպասումից, հուսադրումից ու խաբուսիկ երջանկությունից հետո մի օր հանկարծակի ինձ գտնում եմ ավելի քան երբևէ միայնակ: Ամեն համբույրից,նվաղումից հետո մեկուսացումն ահագնանում է: Ու որքա՜ն վշտաբեր և անտանելի է այն:

Մի բանաստեղծ՝ Մ. Սուլլի Պրուդոմը չէր գրե՞լ արդյոք.

Փաղաքշանքները անհանգիստ փոխադրամիջոցներ են սոսկ,
Անապահով սիրո անպտուղ ջանքեր, որ փորձարկում են
Հոգիների անհնար միաձուլումը մարմինների միջոցով…
Հետո… Մնաս բարով: Ահա և վերջ: Հազիվ ենք կարողանում ճանաչել նույն մարմնում այն կնոջը, որ կյանքի մի ինչ-որ պահի ամեն ինչ էր մեզ համար և որի խիստ անձնային ու չնչին միտքն անգամ մենք չենք ճանաչել անկասկած: Նույնիսկ այն պահերին, երբ թվում էր, թե մարմինների խորհրդավոր համաձայնության, բոլոր իղձերի և ներշնչանքների կատարյալ միաձուլման մեջ, իջել էինք մինչև խորքը նրա հոգու, մի բառ, մի չնչին բառ երբեմն վեր էր հանում թյուր իմացությունը մեր, ցույց տալիս մեր մեջ գոյություն ունեցող սև խոռոչը, ինչպես լույսը գիշերվա մեջ,:

Եվ այսուհանդերձ կա՞ աշխարհում ավելի գեղեցիկ մի բան, քան անցկացնել երեկոն մի կնոջ հետ, ում սիրում ենք, անխոս, կատարելապես երջանիկ միայն նրա ներկայության փոքրիկ մտքից անգամ: Չհարցնենք այլևս, քանզի երկու արարած երբեք չեն կազմում մի մարմին ու մի հոգի:

Ինչ վերաբերում է ինձ, հիմա, ես փակել եմ հոգիս: Չեմ ասում այլևս ոչ մեկին, թե ինչ եմ կարծում, ինչ եմ մտածում, ինչ եմ սիրում: Ինձ դատապարտված համարելով դառնալի մենության՝ ես նայում եմ իրերին՝ առանց առաջադրելու կարծիքս: Ինչի՞ս են

կարծիքներ, վեճեր, հավատներ: Չկարողանալով ոչինչ կիսել որևէ մեկի հետ՝ հիասթափված եմ ամենից: Իմ անտես միտքը դառնում է անհասանելի բոլորին: Ես միօրինակ պատասխաններ ունեմ ամենօրյա հարցադրումներին, և մի ժպիտ, որ ասում է “Այո”, երբ ես անգամ ճիգ չեմ գործադրում խոսելու: Հասկանու՞մ ես ինձ: Մենք բարձրացել էինք Էտուալի Հաղթական կամարի պողոտան, հետո կրկին իջել մինչև Կոնկորդի հրապարակ, քանզի նա արտաբերում էր այս ամենը դանդաղորեն՝ ավելացնելով էլի շատ ու շատ բաներ, որ արդեն չեմ հիշում: Նա կանգ առավ հանկարծակի, և մեկնելով ձեռքը Փարիզի քարահարթակին կանգնեցված գրանիտե սյունանման բարձրիկ կոթողի կողմը, որ կորցնում էր աստղերի մեջ իր երկար եգիպտական կերպարանքը, մի հուշարձան, որ կրում էր իր երկրի պատմության սյունին տարօրինակ նշանները, բացականչեց.
-Ահա, մենք ամենքս նման ենք այս քարին:
Հետո նա լքեց ինձ՝ առանց մի բառ ավելացնելու: Հիվա՞նդ էր նա արդյոք, խե՞նթ, թե՞ իմաստուն: Դեռևս չգիտեմ: Երբեմն ինձ թվում է՝ նա իրավացի էր, երբեմն էլ, որ խելքը թռցրել էր:

Թարգմանությունը ֆրանսերենից Լուսինե Մուսախանյանի